ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայում ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում շարունակում է պահպանվել կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված արտակարգ իրավիճակը: Նման իրավիճակի պահպանման պայմաններում, աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, նկատվում է կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելու դեպքերի, ինչպես նաև այդ հիվանդության հետևանքով մահվան դեպքերի թվերի աճ:

Այսպես, օգոստոսի վիճակագրական պատկերը հետևյալն է.

1) առաջին շաբաթվա ընթացքում (01-07.08.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 1,818 դեպք՝ կատարված 43,897 թեստավորումներից (4.14%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 31.

2) երկրորդ շաբաթվա ընթացքում (08-14.08.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 2,401 դեպք՝ կատարված 40,281 թեստավորումներից (5.96%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 45.

3) երրորդ շաբաթվա ընթացքում (15-21.08.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 3,076 դեպք՝ կատարված 46,082 թեստավորումներից (6.67%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 57.

4) չորրորդ շաբաթվա կեսի դրությամբ (22-29.08.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 3,702 դեպք՝ կատարված 42,890 թեստավորումներից (8.63%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 71:

Ընդամենը՝ 10,997 դեպք, 173,150 (6.35%) թեստավորում, 204 մահվան դեպք:

Սեպտեմբերի վիճակագրական պատկերը հետևյալն է.

1) առաջին շաբաթվա ընթացքում (30.08-04.09.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 3,414 դեպք՝ կատարված 34,671 թեստավորումներից (9.84%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 81.

2) երկրորդ շաբաթվա ընթացքում (05-11.09.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 3,825 դեպք՝ կատարված 35,991 թեստավորումներից (10.62%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 91.

3) երրորդ շաբաթվա ընթացքում (12-18.09.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 4,750 դեպք՝ կատարված 34,033 թեստավորումներից (13.95%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 129.

4) չորրորդ շաբաթվա կեսի դրությամբ (19-26.09.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 5,407 դեպք՝ կատարված 36,962 թեստավորումներից (14.62%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 133:

Ընդամենը՝ 17,396 դեպք, 141,657 (12.28%) թեստավորում, 434 մահվան դեպք:

Հոկտեմբերի վիճակագրական պատկերը հետևյալն է.

1) առաջին շաբաթվա ընթացքում (26.09-02.10.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 6,145 դեպք՝ կատարված 59,951 թեստավորումներից (10.2%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 121.

2) երկրորդ շաբաթվա ընթացքում (03-09.10.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 7,666 դեպք՝ կատարված 57,787 թեստավորումներից (13.32%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 177.

3) երրորդ շաբաթվա ընթացքում (10-16.10.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 9,635 դեպք՝ կատարված 80,747 թեստավորումներից (11.9%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 229.

4) չորրորդ շաբաթվա կեսի դրությամբ (17-23.10.2021թ.) կորոնավիրուսային հիվանդության հաստատված դեպքերի թիվը կազմել է 13,377 դեպք՝ կատարված 106,531 թեստավորումներից (12.5%), իսկ մահվան դեպքերի թիվը՝ 235:

Ընդամենը՝ 36,823 դեպք, 305,016 (12.9%) թեստավորում, 762 մահվան դեպք:

Իր հերթին, 2021թ. հուլիս ամսին ընդհանուր պատկերը եղել է հետևյալը.

- հաստատված դեպքեր՝ 5,118
- կատարված թեստավորումներ՝ 152,295
- մահվան դեպքեր՝ 102:

Օգոստոս.



Սեպտեմբեր.


6000
5000
4000
3000
2000
1000
0
1-ին շաբաթ
2-րդ շաբաթ
3-րդ շաբաթ
4-րդ շաբաթ
Վարակվածներ
Մահեր


40000
35000
30000
25000
20000
15000
10000
5000
0
Հուլիս
Օգոստոս
Սեպտեմբեր
Հոկտեմբեր
Վարակվածներ
Մահեր

Վերոգրյալ թվերի աճի համատեքստում կարելի է նկատել, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) զգուշացրած՝ աշնանը աշխարհում կորոնավիրուսային հիվանդության նոր ալիքն, ըստ էության, արդեն սկսվել է: Իր հերթին, նույն հայտարարությամբ ԱՀԿ-ն խորհուրդ է տվել պետություններին ձեռնարկել միջոցներ նոր ալիքի դեմ պայքարելու և վարակի տարածման տեմպերը կանխելու համար[1]: Միաժամանակ, ԱՀԿ-ն զգուշացրել է կորոնավիրուսային հիվանդության նոր տեսակների՝ ալֆա (բրիտանական), բետա (հարավ-աֆրիկյան), գամմա (բրազիլիական) և դելտա (հնդկական) առաջանալու և դրանց առավել վտանգավորության մասին[2]:

Հայաստանի Հանրապետությունում հաստատված կորոնավիրուսային հիվանդության դեպքերի աճի պայմաններում, աշխարհում կորոնավիրուսային հիվանդության նոր տեսակի հայտնաբերման պայմաններում անհրաժեշտություն է առաջացել արդյունավետ դարձնել վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ միջոցների կիրառումը և սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների խիստ պահպանումը՝ հիվանդության տարածումը հնարավորինս կանխելու, մահվան դեպքերը նվազեցնելու համար: Խոսքը վերաբերում է հատկապես կորոնավիրուսային հիվանդության համավարակի կանխարգելման գործընթացում հետազոտությունների պարբերական իրականացմանը կամ պատվաստանյութի կիրառմանը, որոնք ունեն առանցքային դեր վարակի կանխարգելման հարցում:

Հատկանշական է, որ ԱՀԿ-ն նույնիսկ հորդորում է չհետաձգել կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումները[3]: Միաժամանակ, ԱՀԿ-ն նշում է, որ պատվաստանյութերը անվտանգ են 18 և ավելի տարիքի մարդկանց մեծամասնության համար, ներառյալ տարբեր տեսակի հիվանդություններ ունեցող անձնաց համար. օրինակ՝ աուտոիմունային հիվանդություններ, հիպերտոնիա, շաքարախտ, ասթմա, թոքերի, լյարդի և երիկամների հիվանդություններ, ինչպես նաև քրոնիկ հիվանդություններ, որոնք կայուն են և վերահսկելի:

Նշվածի համատեքստում հարկ է նկատել, որ առողջապահության ոլորտում պետությունն առաքելություն է ստանձնել պահպանել բնակչության առողջությունը: Կորոնավիրուսային հիվանդության նշված հանգամանքներով պայմանավորած՝ «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի հիման վրա նախատեսվում են վարակիչ հիվանդությունների տարածման կանխարգելմանն ուղղված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները: Այդ նպատակով լիազոր մարմնի կողմից ընդունվել է անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության այլ կանոնները:

Միևնույն ժամանակ, հասարակական հարաբերությունների շրջանակում, հատկապես, աշխատանքային հարաբերությունների, այդ թվում՝ աշխատող-հաճախորդ (սպառող, պատվիրատու և այլն) նշված կանոնների պահպանման և դրանց սահմանմամբ պայմանավորված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ են գործուն մեխանիզմներ, որոնք հնարավարություն կտան ապահովել սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պատշաճ պահպանումը նշված հարաբերությունների սուբյեկտների կողմից:

Վերոգրյալի լույսի ներքո, աշխատանքային հարաբերությունների սուբյեկտների առողջության պահպանումը երկակի կարևորություն ունի: Մասնավորապես, կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման մեխանիզմների նախատեսումը այս հարաբերությունների շրջանակում մի կողմից

[1] https://unric.org/en/who-warns-of-risk-of-a-new-covid-19-wave/
[2] https://www.who.int/en/activities/tracking-SARS-CoV-2-variants/
[3] https://www.who.int/emergencies/diseases/novel-coronavirus-2019/covid-19-vaccines/advice

հնարավորություն կտա պաշտպանել աշխատողների և բնակչության առողջությունը, ձևավորել կոլեկտիվ իմունիտետ այս հիվանդության նկատմամբ, իսկ մյուս կողմից՝ կապահովի այդ հարաբերությունների պատշաճ կենսագործունեությունն ու իրականացումը, գործառույթների իրականացումը, գործատուների տնտեսական գործունեության անխափան իրականացումը, ինչպես նաև կնպաստի պետությունում տնտեսական կայունությանը:

Այսպես, աշխատողների կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները պահպանելը կարող է էական ազդեցություն ունենալ վարակի դեպքերը նվազեցնելու և գործատուների գործունեությունը պատշաճ կազմակերպելու գործընթացում:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է աշխատողների կողմից սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի նրանց կողմից վարակվելու հավանականության նվազեցմանը կամ վարակվելու ծայրահեղ դեպքում հիվանդության թեթև ընթացքի ապահովմանը, այդ անձանց շնորհիվ վարակի թվերի աճի տեմպերի կանխմանը, հանրային իմունիտետի ձևավորմանը և հանրային առողջության ապահովմանը:

Վարակի տարածման կանխարգելիչ միջոցների խիստ պահպանման ուղղությամբ քայլերի ձեռնարկման պահանջը բխում է նաև Սահմանադրությունից, որի 85-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք, իսկ 86-րդ հոդվածով պետության քաղաքականության հիմնական նպատակների շարքում նախատեսվում է բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը: Այս պոզիտիվ պարտականությունից է բխում կորոնավիրուսային վարակի տարածման դեմ պայքարի ոլորտում Կառավարության որդեգրած քաղաքականությունը:

Միաժամանակ, հարկ է նկատել, որ սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների, հատկապես՝ պարբերական հետազոտության կամ պատվաստումների պարտադիր իրականացումը դարձել է տարածված միջազգային պրակտիկա և մի շարք երկրներ արդեն իսկ ներդրել են համապատասխան մեխանիզմներ[4]:

Հարկ է նշել, որ համապատասխան կանխարգելիչ միջոցառումների չիրականացումը հղի է նաև հանրային իշխանության մարմինների գործառույթների պատշաճ իրականացման համար խոչընդոտներ ստեղծելու վտանգով: Պետությունը, այս համատեքստում՝ որպես գործատու, նույնպես կարող է սահմանել աշխատանքի կազմակերպման իր առանձնահատկությունները՝ հանրային իշխանության մարմիններում աշխատանքի բնականոն պայմաններն ու շարունակականությունն ապահովելու համար, հատկապես հաշվի առնելով, որ այդ մարմիններում ներկայումս աշխատում են ավելի քան 44,500 հանրային ծառայողներ (չհաշված Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների, Զինված ուժերի կազմի, Պաշտպանության նախարարության որոշ կազմի, Ոստիկանության ծառայողների, այդ թվում՝ Ոստիկանության զորքերի, և դիվանագիտական ծառայողների թիվը[5]):

---

[4] Տարբեր երկրներում կիրառված սահմանափակումների մասին տե՛ս https://www.reuters.com/world/countries-make-covid-19-vaccines-mandatory-2021-07-13/; https://mintrud.gov.ru/docs/1876; https://www.eeoc.gov/wysk/what-you-should-know-about-covid-19-and-ada-rehabilitation-act-and-other-eeo-laws; https://www.gov.uk/government/publications/covid-19-vaccination-guide-for-employers/covid-19-vaccination-guide-for-employers; https://www.lexology.com/library/detail.aspx?g=cf2f8fbc-c47d-4658-9437-65fa0c795883 :

[5] Հաշվարկն իրականացվել է հանրային իշխանության մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության և Վարչապետի «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» 11.06.2018 թվականի թիվ 706-Ա որոշմամբ նախատեսված հաստիքների թվաքանակի համադրմամբ:

Հետաքրքրական է, որ ԱՄՆ-ում նույնպես առանձնակի շեշտադրում է արվում հանրային ծառայության կարևորության վրա, որտեղ նախատեսվել է դաշնային ծառայողների պարտադիր պատվաստման պահանջը[6]:

Հատկանշական է, որ նույնիսկ վարակի տարածման կանխարգելման ամենախիստ միջոցի՝ պատվաստման առնչությամբ ձևավորված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկան ընդունելի է համարում պատվաստման պահանջների նախատեսումը: Այսպես, ՄԻԵԴ-ը Վավրիկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով (երեխաների պարտադիր պատվաստումների վերաբերյալ)՝ եզրահանգել է, որ քննարկվող դեպքում պատվաստման պահանջը բխում է անհատների և հասարակության առողջության պահպանման և երեխաների շրջանում պատվաստման մակարդակի նվազման կանխարգելման հրատապ սոցիալական անհրաժեշտությունից[7]: ՄԻԵԴ-ն իրավաչափ է համարել նաև չպատվաստվելու դեպքում չեխական օրենսդրությամբ նախատեսված սանկցիան, այն է՝ տուգանք՝ մինչև 10.000 չեխական կրոնա (մոտ 400 եվրո):

Նման եզրահանգումը ՄԻԵԴ-ը հիմնավորել է այն պատճառաբանությամբ, որ պետությունները պատվաստման վերաբերյալ քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս, որպես կանոն, օժտված են հայեցողության լայն շրջանակով (կետ 274): Արձանագրելով, որ Կոնվենցիայի անդամ պետություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ պաշտպանելու իրենց իրավազորության ներքո գտնվող քաղաքացիների կյանքը և առողջությունը, ինչպես նաև հաշվի առնելով քննարկվող դեպքում պատվաստման կարևորությունը փաստող առկա մասնագիտական կարծիքները՝ Եվրոպական դատարանը եզրահանգել է, որ քննարկվող դեպքում պարտադիր պատվաստման պահանջը բխում է անհատների և հասարակության առողջության պահպանման և երեխաների շրջանում պատվաստման մակարդակի նվազման կանխարգելման հրատապ սոցիալական անհրաժեշտությունից (կետ 282-338): Ընդ որում, Եվրոպական դատարանը հատուկ կարևորել է այն հանգամանքը, որ չեխական օրենսդրությամբ չեն նախատեսում մեխանիզմներ, որոնց կիրառմամբ անձը հարկադիր կերպով (ուժի կիրառմամբ կամ նման այլ միջոցներով) կարող է պատվաստվել: Պատվաստման պարտադիրության վերաբերյալ պահանջների կատարումն ապահովվում է «անուղղակի» հարկադրանքի, այն է՝ տուգանքների կիրառման միջոցով:

Սոլոմախինն ընդդեմ Ուկրաինայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ պարտադիր պատվաստումը միջամտություն է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին: Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը եզրակացրել է, որ այդպիսի միջամտությունը կարող է հիմնավորված և, հետևաբար, իրավաչափ լինել, եթե այն անհրաժեշտ է վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու համար[8]:

Հարկ է նկատել, որ առաջարկվող կարգավորումների հիմնական նպատակը հանրային առողջության պահպանությունն է և վերջինիս համատեքստում հատկապես աշխատողների՝ առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններում աշխատելու իրավունքի իրացման համար պայմանների ապահովումը: Մասնավորապես.

---

[6] https://www.whitehouse.gov/briefing-room/presidential-actions/2021/09/09/executive-order-on-requiring-coronavirus-disease-2019-vaccination-for-federal-employees/

[7] Vavřička and Others v. the Czech Republic [GC], application nos. 47621/13, 3867/14, 73094/14, judgment of 08 April 2021, §§ 282-283

[8] Solomakhin v. Ukraine, application no. 24429/03, judgment of 15 March 2012, §§ 33, 36

Առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմաններում աշխատանքը յուրաքանչյուր աշխատողի սահմանադրական իրավունքն է: Մասնավորապես, **Սահմանադրության 82-րդ հոդվածի** համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք: **Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի** համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:

Սահմանադրության 86-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը: Առողջության պահպանման իրավունքը Սահմանադրությամբ նախատեսելով՝ պետությունն իր վրա վերցնում է պարտավորություն իրականացնելու համալիր միջոցառումներ՝ ուղղված բնակչության առողջությունը վատթարացնող պատճառների առավելագույն հնարավոր մակարդակով վերացմանը, ինչպես նաև համաճարակային և այլ հիվանդությունների կանխարգելմանը:

Մյուս կողմից, **ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ** մասով սահմանվում է, որ պետությունն ապահովում է աշխատանքային իրավունքների իրականացումը՝ Օրենսգրքի և այլ օրենքների դրույթներին համապատասխան: Աշխատանքային իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, **հանրության առողջության** ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: **Օրենսգրքի 216-րդ հոդվածով սահմանվում է, որ** աշխատողը պարտավոր է բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը, կատարել աշխատանքի սահմանված նորմաները, պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման պահանջները, բարեխղճորեն վերաբերվել գործատուի և այլ աշխատողների գույքին, **ինչպես նաև մարդկանց կյանքին ու առողջությանը:**

Օրենսգրքի 217-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործատուն պարտավոր է ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ: **Օրենսգրքի 243-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝** աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Աշխատողների առողջության և անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 4.5-րդ բաժնի 1-ին պարբերությամբ սահմանված է, որ Կառավարության քաղաքականությունն ուղղված է լինելու անհատի և հանրային առողջության պահպանմանն ու բարելավմանը, իսկ նշված բաժնի 3-րդ կետով նախատեսվում է, որ Կառավարության ուշադրությունը կենտրոնացած է լինելու բնակչության առողջության պահպանման և բարելավման նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումների իրագործմանը, ռիսկի գործոնների ազդեցության կանխարգելմանը:

Ըստ այդմ, հարկ է նկատել, որ նախագծերով նախատեսվող կարգավորումների նպատակը հենց հանրային առողջության պահպանությունն է, որպիսի քաղաքականության կարևորությունը հաստատվում է առողջության բնագավառում պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի կողմից՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, ներառյալ՝ կորոնավիրուսային հիվանդության զարգացումը (մուտացիան) և դրա արդեն, ըստ էության, սկսված 4-րդ ալիքի սպառնալիքները:

Միաժամանակ, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ում նախատեսված են նաև հետևյալ ցուցանիշները՝ մինչև 2050 թվականը 5 միլիոն բնակչություն, կյանքի սպասվող տևողությունը մինչև 90 տարի:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծերով առաջարկվում է Օրենսգրքում և Օրենքում կատարել լրացումներ և փոփոխություն, որոնցով սահմանվում են աշխատողին աշխատանքի չթույլատրելու, գործատուի կողմից աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի չթույլատրելու և լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հատուկ հիմքերը: Իր հերթին, Օրենքի առաջարկվող կարգավորումների գործողությունը տարածվելու է հանրային ծառայությունը ընդգրկող **պետական ծառայության, համայնքային ծառայության և հանրային պաշտոնների վրա**:

Այսպես, որպես աշխատանքի (ծառայության) չթույլատրման հիմք սահմանվում է սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված՝ աշխատանքի (ծառայության) ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի բացակությունը աշխատանքի (ծառայության) ներկայանալիս: Ընդ որում, նշվածից և Առողջապահության նախարարի կողմից սահմանված սանիտարահամաճարակային անվտանգության կանոններից բխում է, որ աշխատողն ինքը կարող է ընտրել կանխարգելման այն միջոցը, որը անհրաժեշտ կլինի իր աշխատանքի ներկայանալու համար՝ դա կլինի հետազոտության արդյունքը հավաստող փաստաթուղթը կամ իր ցանկության դեպքում՝ պատվաստման սերտիֆիկատը, իսկ հակացուցումների դեպքում՝ բժշկական տեղեկանքը:

Հատկանշական է, որ առաջարկվող կարգավորումներով աշխատողներին և հանրային իշխանության մարմիններում ծառայողներին հնարավորություն է տրվում ողջամիտ ժամկետում փոխել իրենց վարքագիծը՝ նախագծերով նախատեսված անբարենպաստ հետևանքներից խուսափելու համար:

Վերը նշված պայմանը սահմանված ժամկետներում չկատարելու դեպքում միայն, սահմանվում է աշխատանքային պայմանագրի միակողմանի լուծման հիմք, իսկ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի լիազորությունները պետք է դադարեցվեն կամ նրանք զբաղեցրած պաշտոնից ազատվեն. մասնավորապես, **եթե անձը վերոնշյալ հիմքով,** այսինքն՝ իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով ավելի քան 10 աշխատանքային օր (հերթափոխ) անընդմեջ կամ վերջին երեք ամսվա ընթացքում՝ ավելի քան 20 աշխատանքային օր (հերթափոխ) չի կատարել իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները: Ընդ որում, այս ժամկետների մեջ տրամաբանորեն չպետք է հաշվարկվեն այն ժամկետները, երբ անձը այսպես, թե այնպես չպետք է ներկայանար աշխատանքի, օրինակ՝ գտնվել է արձակուրդի, ժամանակավոր աշխատունակության կամ գործուղման մեջ: Հարկ է նկատել, որ նշված 10 և 20 աշխատանքային օր ժամկետները սահմանվել են նպատակ ունենալով ապահովել գործատուների տնտեսական գործունեության անխափան իրականացումը, հանրային իշխանության

մարմինների կողմից իրականացվող գործառույթների պատշաճ իրականացումը, աշխատանքային հարաբերությունների պատշաճ կենսագործունեությունն ու իրականացումը:

Միևնույն ժամանակ, մի շարք հանրային պաշտոնների դեպքում սահմանվել է այս կարգավորումների կիրառումից բացառություն այն հիմնավորմամբ, որ այդ ցանկում ներառվեն այն անձինք, որոնց պաշտոնը կա՞մ ընտրովի պաշտոն է, կա՞մ վերջիններս նշանակվում են սահմանադրական գործընթացների արդյունքում կամ նրանք, ելնելով իրենց կարգավիճակից և զբաղեցրած պաշտոնի առանձնահատկություններից, ըստ էության, չունեն վերադաս մարմին կամ պաշտոնատար անձ, որը միաժամանակ վերջիններիս նշանակում կամ ազատում է պաշտոնից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների կողմից համատեղ:

5. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է ապահովել աշխատանքային հարաբերությունների պատշաճ կենսագործունեությունն ու իրականացումը, դրանց սուբյեկտների գործառույթների իրականացումը, գործատուների տնտեսական գործունեության անխափան իրականացումը, պետությունում տնտեսական կայունությանը, ինչպես նաև հանրային իշխանության մարմինների կողմից իրականացվող գործառույթների պատշաճ իրականացումը, ինչը բխում է հանրային շահերից և պետության պոզիտիվ պարտականություններից: Միաժամանակ, նպատակ է հետապնդվում հնարավորություն ընձեռել կանխարգելելու կորոնավիրուսային հիվանդության տարածումը Հայաստանի Հանրապետությունում, ձևավորել կոլեկտիվ իմունիտետ այդ հիվանդության նկատմամբ, ապահովել հանրային առողջության բավարար մակարդակը՝ նպաստելով անձանց առողջության պահպանմանը: